ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ

Ի կատարումն ՀՀ նախագահի 2010 թ. հունվարի 30-ի ՆԿ-12-Ն կարգադրության պահանջների՝ ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը 2011 թ. փետրվարի 25-ին Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմում կայացած նիստում ամփոփել է ՀՀ նախագահի 2009 թ. ՆԿ-162-Ն կարգադրությամբ հաստատված «2009-2012 թթ. ընթացքում ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով» 2010 թ. նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքները:

Արձանագրված տվյալները վկայում են, որ հանրապետությունում շարունակվում է թմրամոլության հետ կապված իրավախախտումների աճի միտումը: 2010 թ. ընթացքում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի ուղղությամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվել է 1524 դեպք, որը 286-ով կամ 23,1%-ով ավելի է նախորդ տարվանից: Ընդհանուր առմամբ, ապօրինի շրջանառությունից առգրավվել է 126 կգ 521 գ տարբեր թմրամիջոց՝ 2009 թ. 56 կգ 762 գ-ի դիմաց, ինչպես և 76,4 գ հոգեմետ նյութ, 16,7 լիտր պրեկուրսոր (2009 թ.՝ 6,2 գ հոգեմետ նյութ և 2,8 լիտր պրեկուրսոր):

Տարվա ընթացքում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության ոլորտում հանցագործություններ կատարելու համար քրեական պատասխանատվության են ենթարկվել 854 անձ, 2009 թ. 780-ի դիմաց: Նշված անձանցից 21-ը կանայք են, 2-ը՝ անչափահասներ, 58-ը՝ այլ երկրների քաղաքացիներ (2009 թ. համապատասխանաբար՝ 25, 8 և 30): Նույն ժամանակաշրջանում առանց բժշկի թույլտվության թմրամիջոցներ գործածելու համար վարչական պատասխանատվության են ենթարկվել 295 անձ, որը 173-ով կամ 141,8%-ով շատ է 2009 թ-ից:

2010 թ. ընթացքում որոշակի աշխատանքներ են կատարվել ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ուղղությամբ: ՀՀ կառավարության 2010 թ. հուլիսի 15-ի թիվ 892-Ն որոշմամբ հաստատվել է «2010-2012 թթ. ընթացքում ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով» նախատեսված միջոցառումների ժամանակացույցը, նշանակվել են առանձին միջոցառումների կատարման համար պատասխանատու գերատեսչություններ:

Ապահովելով ժամանակացույցով 2010 թ. ընթացքում նախատեսված միջոցառումների կատարումը՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից թմրամիջոցների մասին համապատասխան տեղեկատվության հավաքագրմանը վերաբերող փոփոխություններ են

կատարվել «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ կանոնադրության մեջ:

Պալիատիվ խնամքին առնչվող կարիքների գնահատման, երկրում պալիատիվ խնամքի խթանման, դրա իրավական կանոնակարգման ու հետագա զարգացման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու նպատակով մշակվել է «ՀՀ-ում պալիատիվ բժշկական օգնության հայեցակարգ» և դրա կատարումն ապահովող միջոցառումների ցանկ:

Թմրամիջոցների հետ կապված վարակիչ հիվանդությունների (հեպատիտ C) նկատմամբ պետական վիճակագրական հաշվետվության համակարգի սահմանումն ապահովելու համար մշակվել է համաճարակաբանական հսկողության էլեկտրոնային համակարգի սանիտարական կանոնները և նորմերը, որով սահմանվել է վարակիչ հիվանդությունների հաշվառման, հաղորդման և հաշվետվության համակարգը: Հաշվառման ենթակա վարակիչ հիվանդությունների հաշվետվական ձևերը կներդրվեն 2011 թ. ընթացքում:

Թմրամիջոցների և թմրամոլության մոնիթորինգի և համաճարակաբա-նության ոլորտի միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և ներդրման ապահովման նպատակով 2010 թ.ց դասընթացներ են իրականացվել 111 ուսանողների համար: Հետագա ուսումնական գործընթացը արդիականացնելու նպատակով նախապատրաստվում են ուսումնական ձեռնարկներ և այլ նյութեր, որոնք պատրաստ կլինեն 2011 թ.ն:

ՀՀ կառավարության 09.10.2010 թ. թիվ 1646-Ն որոշմամբ հաստատվել է «ՀՀ կառավարության 2003 թ. օգոստոսի 21-ի N 1129-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշումը, ըստ որի՝ «թիանեպտին», «տրոպիկամիդ», «սեդալգին» և «պրեգաբալին» դեղերն ընդգրկվել են այն թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ցանկում, որոնց շրջանառության հսկողության վերաբերյալ սահմանված են որոշակի պայմաններ:

Հաշվետու տարում իրավապահ մարմինների կողմից ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նարկոլոգիական կլինիկա և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն փորձաքննության ներկայացված 1631 անձանցից հաշվառման են վերցվել 1153-ը, որից 17-ը կանայք են, 32-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետության և 1-ը՝ Իսպանիայի քաղաքացիներ: 2009 թ. համապատասխանաբար՝ 1994 անձանցից հաշվառման էին վերցվել 1142-ը, որից 17-ը՝ կանայք, 20-ը՝ ԻԻՀ քաղաքացի:

2010 թ. ընթացքում «ԱՐՄՖԱՐՄԱՑԻԱ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ է ներմուծվել ընդհանուր առմամբ 306000 սրվակ թմրամիջոց, որոնք օգտագործվում են բուժհիմնարկներում:

Դրանք բաշխվել են թվով 104 հիվանդանոցների օնկոլոգիական հիվանդներին՝ «ԱՐՄՖԱՐՄԱՑԻԱ» ՓԲԸ-ի դեղատան միջոցով: Ներկայումս հաշվառման մեջ են 164 օնկոլոգիական հիվանդ և 112 մետադոնային բուժում ստացող թմրամոլ:

ՀՀ ոստիկանության կողմից նկատելիորեն ակտիվացել են թմրամոլության կանխարգելման ուղղությամբ ԶԼՄ-ների հետ կայուն փոխհամագործակցության ապահովման աշխատանքները:

Տարվա ընթացքում «02» հաղորդաշարով եթեր է հեռարձակվել

թմրամոլության դեմ պայքարին նվիրված 43 տեսանյութ, «02» շաբաթաթերթում տպագրվել է 62 հոդված: Կազմակերպվել են ԶԼՄ ներկայացուցիչների հետ մի շարք հանդիպումներ, որոնց ժամանակ արծարծվել են թեմային առնչվող հիմնախնդիրները: Հեռուստաընկերություններին տրամադրվել են թեմային առնչվող տեսանյութեր՝ թեմատիկ տեսահոլովակներ նախապատրաստելու և հատուկ շարքի հեռուստառադիոհաղորդումներ կազմակերպելու համար:

2010 թ. ընթացքում ՀՀ ոստիկանության պաշտոնական ինտերնետային կայքէջը մշտապես թարմացվել է թմրամոլության դեմ պայքարին նվիրված նյութերով, որոնցից պարբերաբար օգտվել են հանրապետությունում գործող բազմաթիվ ԶԼՄ-ներ:

ՄԱԿ-ի զարգացման և ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակների կողմից ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և Նորվեգիայի կառավարության աջակցությամբ ՀՀ ոստիկանության ակադեմիայում հիմնվել է համակարգչային ուսումնական լսարան՝ կահավորված 25 համակարգիչներով, որոնք ապահովված են թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությանը վերաբերող թեմաներով՝ համակարգչային ուսուցողական ծրագրերով:

Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ոստիկանության ու պաշտպանության նախարարության ստորաբաժանումների ծառայողների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների ուժերով անցկացված «Կանեփ-կակաչ-2010» օպերատիվ-կանխարգելիչ համալիր միջոցառման ընթացքում հայտնաբերվել և ոչնչացվել է վայրի աճած և ապօրինի աճեցված 97104 կգ կանեփի և 23 կգ կակաչի զանգվածներ: Հարուցվել է 5 քրեական գործ՝ մշակումն արգելված թմրանյութեր պարունակող բույսեր աճեցնելու փաստերով:

ՀՀ ոստիկանության պատվիրակության այցի ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետության կարգապահական ուժերի (ոստիկանության) հրամանատարության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել տեղեկատվության փոխանակման նպատակով փորձագիտական խմբերի ստեղծման, մաքսանենգ ճանապարհով թմրամիջոցների տեղափոխմանը վերաբերող տեղեկատվության փոխանակման ու համագործակցության ընդլայնման հարցերի շուրջ:

ՀԱՊԿ անդամ պետությունների շրջանակներում 2010 թ. իրականացվող «Կանալ» օպերատիվ կանխարգելիչ միջոցառումների ժամանակ ապահովվել է սերտ համագործակցությունը ՀՀ Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ, թմրամիջոցների,

հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների օրինականացման դեպքերի բացահայտման նպատակով: Այս բնագավառում համագործակցություն է իրականացվում նաև ՌԴ Ռոսֆինմոնիթորինգի և ՀՀ-ում Ինտերպոլի ազգային բյուրոյի հետ:

Մշակվել և շրջանառության մեջ է դրվել «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը նախատեսում է միասնականացնել ոլորտում կիրառվող տերմինաբանությունը, ինչպես և կարգավորել հոգեմետ նյութերը կամովին հանձնելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու խնդիրը:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից ազատությունից զրկված անձանց շրջանում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխման միջոցառումների ակտիվացման ուղղությամբ իրականացվում է թմրամոլության ու դրա հասցրած վնասի հետ կապված կամավոր խորհրդատվություն և հետազոտություն տրամադրելու վերաբերյալ անհրաժեշտ իրավական ակտերի մշակում և ընդունում:

Ձերբակալված անձանց պահելու վայրերի և քրեակատարողական հիմնարկների կրտսեր և ավագ սպայակազմի համար անցկացվում են սեմինար-խորհրդակցություններ, հատուկ դասընթացներ՝ այդ հիմնարկներում թմրամոլության կանխարգելման ծրագրերի իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է ՀՀ զինված ուժերում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը, ձեռնարկվել են օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումներ թմրանյութ օգտագործողներին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ, իրականացվել են նախականխիչ աշխատանքներ՝ ՀՀ ոստիկանության և ՀՀ ԱԱԾ մարմինների հետ օպերատիվ տեղեկատվության փոխանակման միջոցով:

Զորամասերի և ՌՈ տարածքային բաժինների կողմից մշակվել են համապատասխան պլաններ, որոնցում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել թմրամոլության կանխարգելմանը, նախատեսվել են նաև դասախոսություններ՝ թմրամոլության կանխարգելման ազգային ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից անչափահասների և երիտասարդների շրջանում թմրամիջոցների գործածման նկատմամբ սոցիալական անձեռնմխելիության խթանման նպատակով մշակվել է 2011-2012 թթ. միջոցառումների փաթեթ:

Հանրակրթական դպրոցների 8-9-րդ դասարաններում ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա ներդրվել է «Առողջ

ապրելակերպ» դասընթացը, որին տարեկան տրամադրվում է 14 դասաժամ։ Դասընթացի ծրագրում ընդգրկված է երիտասարդության շրջանում թմրամոլության դեմ պայքարին վերաբերող տեղեկատվություն։

ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի կողմից 2010 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին իրականացվել է «Առողջ ապրելակերպ» դասընթացը վարող ուսուցիչների եռօրյա վերապատրաստում, որտեղ ներառված են թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վերաբերյալ նյութեր։

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հետ համագործակցության շրջանակներում 2010 թ. կազմվել և հրատարակվել է ուսուցիչների և սովորողների համար «Թրաֆիքինգ» ձեռնարկը, որտեղ ընդգրկված են նյութեր՝ թմրադեղերի ապօրինի շրջանառության և թմրամոլության դեմ պայքարի մասին։

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի Արարատի և Շիրակի մարզային կենտրոնները կազմակերպել են թմրամոլության դեմ պայքարի մեխանիզմների վերաբերյալ երիտասարդների իրազեկման բարձրացմանը նպատակաուղղված դասընթաց-քննարկումներ, իսկ Շիրակի մարզային կենտրոնը «Նոր սերունդ» ՀԿ-ի հետ պատրաստել է «Երիտասարդությունն ընդդեմ թմրամոլության» սոցիալական հոլովակը։

ՀՀ ԿԱ ՊԵԿ համապատասխան ստորաբաժանումները ակտիվ մասնակցել են ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի գործունեությանը՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի վերահսկվող մատակարարումներ իրականացնելու, ինչպես նաև համապատասխան իրավական ակտերի մշակման ուղղությամբ։

Ստեղծվում է տեղեկատվական բազա՝ հոգեմետ նյութերի և դրանց

պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված իրավախախտումների, նման գործունեությանն առնչվող ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ՝ վերլուծական աշխատանքներ իրականացնելու, ինչպես և իրավասու այլ պետական մարմիններին, այդ թվում՝ թմրամիջոցների և թմրամոլության մոնիթորինգի կենտրոնին տրամադրելու համար։ Ըստ ձեռք բերված պայմանավորվածության՝ կենտրոնին պարբերաբար կտրամադրվեն տեղեկություններ ՊԵԿ աշխատակիցների կողմից հայտնաբերված թմրամիջոցների և հոգեմետ նյութերի վերաբերյալ։

Պետական եկամուտների կոմիտեի ուսումնական կենտրոնում նախատեսվում է կազմակերպել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության, թմրամոլության կանխարգելման ուսումնական ծրագիր։

Համաձայն ՀՀ արտաքին գործերի նախարարության տեղեկատվության՝ 2010 թ. մարտին ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի խորհրդատվական

խմբի ՀՀ կատարած այցի արդյունքում որոշում է կայացվել համապատասխան գրասենյակ հիմնել Հայաստանում: 2011 թ. նախատեսվում է գրասենյակի ծրագրերի իրականացման ստորաբաժանման ղեկավարի այցը Հայաստան՝ ՀՀ պաշտոնյաների հետ քննարկելու ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի հետ նոր ծրագրերի իրականացման հնարավորությունները:

Ի դեպ, 2010 թ. հոկտեմբերին ՀՀ է այցելել Թմրանյութերի վերահսկման միջազգային խորհրդի առաքելությունը և ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում գոհունակություն է հայտնել ՀՀ կողմից թմրանյութերի վերահսկման միջազգային կոնվենցիաներով նախատեսված պահանջների իրականացման աշխատանքներից, նշյալ ոլորտի ՀՀ օրենսդրական բարեփոխումներից՝ ներառյալ «2009-2012 թթ. ընթացքում ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագիրը»:

2010 թ. ազգային ծրագրի իրականացման արդյունքներով տրվել են կոնկրետ հանձնարարականներ՝ թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված անհրաժեշտ լրացուցիչ միջոցառումների մշակման և իրականացման վերաբերյալ:

Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի կողմից ի կատարումն ՀՀ Նախագահի կարգադրության պահանջների՝ նախատեսվում են «2009-2012 թթ. ընթացքում ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի» կատարման դիտարկումներ: